ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N 73-Ա/2 31.01.2020թ

## 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2-րդ կետը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել 2020 թվականին պետական հանրակրթական դպրոցների՝ ըստ սովորողների թվի ֆինանսավորման

ԸգՍթ x Սգ1 + (ՏԴթ x ՏԴր + ՄԴթ x ՄԴր + ԱԴթ x ԱԴր) x ՈՒՆա x 12 + ՀԴծ

և ԸգՍթ x Սգ2 + ՀԴծ բանաձևերի գործակիցները՝ հետևյալ չափերով.

1) Սգ1՝ մինչև 73 սովորող ունեցող տարրական, մինչև 163՝ սովորող ունեցող հիմնական, մինչև 208՝ սովորող ունեցող միջնակարգ հանրակրթական դպրոցներում, մինչև 136 սովորող ունեցող վարժարաններում և ավագ դպրոցներում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 27506.3 դրամ,

2) Սգ2-ը՝ 73 և ավելի սովորող ունեցող տարրական, 163 և ավելի՝ հիմնական, 208 և ավելի՝ միջնակարգ հանրակրթական դպրոցներում և 136 և ավելի սովորող ունեցող վարժարաններում և ավագ դպրոցներում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 108282.06 դրամ,

3) ՈՒՆա-ն՝ ուսուցիչների նվազագույն աշխատավարձը մեկ դրույքի համար՝ 108800 դրամ,

4) ՀԴԾ-ն ՝ համադպրոցական ծախսերն են մինչև 100 սովորող ունեցող դպրոցների համար՝ 14273.2 հազ. դրամ, 101-ից մինչև 300 սովորող ունեցող դպրոցների համար՝ 17224.8 հազ.դրամ, 301 և ավելի սովորող ունեցող դպրոցների համար՝ 22374.0 հազ. դրամ:

5) ՏԴր-ն, ՄԴր-ն և ԱԴր-ն ՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում միջին հաշվով մեկ դասարանին ընկնող ուսուցչական դրույքների թիվը՝ համապատասխանաբար՝ 1.1136, 1.4909, 1.5455:

2. Հաշվարկը կատարելիս կիրառել լրացուցիչ գործակիցներ՝ համաձայն հավելվածի:

3. Սովորողների թվաքանակից ելնելով՝ ոչ ուսուցչական անձնակազմի (վարչական, մանկավարժական, ուսումնաօժանդակ) հաստիքների հաշվարկային թվաքանակը սահմանել՝ մինչև 100 սովորող ունեցող դպրոցների համար՝ 9.8, 101-ից մինչև 300 սովորող ունեցող դպրոցների համար՝ 11.8, 301 և ավելի սովորող ունեցող դպրոցների համար՝ 15.3:

4. Որպես դպրոցի սովորողների թիվ (Սթ) և դասարանների թիվ (ՏԴթ, ՄԴթ, ԱԴթ) ընդունվում է սովորողների և դասարանների փաստացի թվաքանակը 2020 թվականի հունվարի մեկի դրությամբ, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին՝ հաշվի առնելով դասարանների փաստացի կոմպլեկտավորումը թվաքանակի միջին տարեկան մեծության հաշվարկման նպատակով:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված

Հայաստանի Հանրապետության

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020թ. ..... ... .....-ի N ..... հրամանի

Պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի լրացուցիչ գործակիցներ

| Բանաձևի անդամը | Տարրական դպրոցի մակարդակում | Միջին դպրոցի մակարդակում | Ավագ դպրոցի մակարդակում | Առանձին գործող ավագ դպրոցների համար | Լեռնային բնակավայրերի դպրոցների համար | Բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար | Բնական գազով չջեռուցվող դպրոցների համար |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՈւՆա | - | - | - | 1.2 | - | 1.074 | - |
| Սգ1 | - | - | - | - | 1.132 | 1.183 | 1.77 |
| Սգ2 | 1.0 | 1.3388 | 1.6653 | 1.2 | - | 1.074 | - |
| ՀԴԾ | - | - | - | 1.038 | - | 1.066 | - |